

ԱՐՑԱԽՅԱՆ ՃԳՆԱԺԱՄ.
Խորհրդարանը ելք է փնտրում
Հանրահավաքներ խորհրդարանի առջեւ եւ Ազատության հրապարակում

Մայիսի 16-ին հրավիրվեց ՀՀ Գերագույն խորհրդի արտահերթ լիագումար նիստ՝ ելնելով վերջին օրերին Լեռնային Ղարաբաղում ստեղծված ծանր կացությանը: Գերագույն խորհուրդը դիմում հղեց ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղար Պերես դե Կուելյարին՝ Լեռնային Ղարաբաղ ՄԱԿ-ի դիտորդներ ուղարկելու խնդրանքով:

Մայիսի 16-ի լույս 17-ի գիշերը Գորիսի շրջանի Խնձորեսկ գյուղին սահմանակցող ադրբեջանական տարածք են բերվել Հադրութի մի քանի գյուղերից տեղահանված հազարի չափ հայեր՝ մոտ 30 ավտոբուս: Ազերի օմոնականները եւ խորհրդային բանակի ստորաբաժանումները շրջապատել են այդ ժամանակավոր ճամբարը: Խնձորեսկ մեկնած արտասահմանցի լրագրողներին ազերի օմոնականները թույլ չեն տվել հանդիպել տեղահանվածների հետ:

Երեկ մայիսի 17-ին, Գերագույն խորհուրդը շարունակեց իր աշխատանքը:

Կեսօրին, Ազատության հրապարակում կայացավ «Արցախ» հայրենակցական միության հանրահավաքը, որն ընդունեց բաճաճեւ:

Խորհրդարանի երեկոյան աշխատանքը շարունակվեց առանց հրավիրյալների եւ «Արցախ» հայրենակցական միության ներկայացուցիչների, որ մինչ այդ մասնակցում էին փակ նիստերին:

Երեկոյան, Ազատության հրապարակում տեղի ունեցավ «Սահմանադրական իրավունք» միության եւ Հանրապետական կուսակցության միացյալ հանրահավաքը, որի կարգախոսներն էին՝ «Անկախություն վերամիավորված Հայաստանին», «Նահանջի ճանապարհ չկա», «Ջնջկրկել պետական անաբեկչության դիմաց»:

Խորհրդարանի երեկոյան նիստի ավարտից առաջ ՀՀ Գերագույն խորհուրդն ընդունեց «Հայաստանի Հանրապետության եւ Ադրբեջանական ԽՍՀ-ի սահմանամերձ շրջաններում եւ Լեռնային Ղարաբաղում ստեղծված իրավիճակի մասին» որոշումը:

Խորհրդարանի ընդունած մի այլ որոշմամբ դատապարտվում է ՀՀ Գերագույն խորհրդի անդամ Համլետ Գրիգորյանի ապօրինի ձերբակալությունը, որ կատարվել էր Ստեփանակերտում մայիսի 16-ին: □

▬ *Հինգշաբթի, 16 մայիսի:* Ստեփանակերտում, առավոտյան 5-ից շրջապատվել է Արմենավան թաղամասը, խուզարկությունների պատճառաբանությամբ: Ձերբակալվել են ժողպատգամավոր Համլետ Գրիգորյանն ու եղբայրը՝ Մավրիկ Գրիգորյանը, կահույքի ֆաբրիկայի արտադրամասի պետ Ռաֆայել Գաբրիելյանը, կոմպոզիտոր Էդուարդ Ղապարյանցը (Ղապարով) եւ շատ ուրիշներ: Ջարդել են դերասանուհի Ժաննա Գալստյանի բնակարանի դուռը նրան ձերբակալելու նպատակով, սակայն նա տանը չի եղել: